ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պատվիրակության՝ 2023թ. մայիսի 14-ից 19-ը Ուզբեկստանի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը

Հարություն Մովսիսյան

2. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Նախարարի խորհրդական

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ք. Սամարղանդ, Ուզբեկստանի Հանրապետություն, 2023 թվականի մայիսի 14-ից 19-ը

4. Հրավիրող կողմը՝

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի Կառավարիչների խորհրդի 32-րդ տարեկան հանդիպմանը և գործարար համաժողովին

6. Քննարկված թեմաները՝

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ ՎԶԵԲ) Կառավարիչների խորհրդի 32-րդ տարեկան հանդիպման շրջանակներում կազմակերպված համատեղ և առանձին հանդիպումների ընթացքում անդրադարձ է կատարվել համաշխարհային տնտեսության վերջին զարգացումներին, գլոբալ արդի մարտահրավերներին և դրանց լուծմանն ուղղված ջանքերին: Կառավարիչների խորհրդին են ներկայացվել ՎԶԵԲ վարչական, ֆինանսական և գործառնական ուղղությունների զարգացումները, 2022 թվականի կատարողականը, ՎԶԵԲ գործառնության երկրներում կատարված աշխատանքները:

Երկկողմ հանդիպումներ են տեղի ունեցել ինչպես ՎԶԵԲ բարձրաստիճան պաշտոնատար անձանց, այնպես էլ այլ երկրների և միջազգային ֆինանսական կառույցների

ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցությանն առնչվող և համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաներ:

ՎԶԵԲ կառավարիչների խորհրդի տարեկան հանդիպմանը Հայաստանը մասնակցել է հաջորդ տարեկան հանդիպումը հյուրընկալող երկրի կարգավիճակով: Հայաստանին հատկացվել է առանձին տաղավար, որտեղ համաժողովի մասնակիցները հնարավորություն ունեին ծանոթանալու Հայաստանի ներդրումային միջավայրին, տեղեկատվություն ստանալու իրենց հետաքրքրող կոնկրետ հարցերի շուրջ:

Տարեկան հանդիպման շրջանակներում անցկացվող «Դիմակայունությանն ուղղված ներդրումներ» խորագրով գործարար համաժողովի շրջանակներում կազմակերպվել է նաև Հայաստանի ներդրումային հեռանկարներին նվիրված պանելային նիստը, որի ընթացքում ներկայացվել են Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի առանձնահատկությունները, հնարավորություններն ու առավելությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Տարեկան հանդիպման շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարի գլխավորած պատվիրակության կազմում մասնակցություն է ապահովվել առանձին հանդիպումների ինչպես ՎԶԵԲ բարձրաստիճան պաշտոնյաների, այնպես էլ այլ երկրների և միջազգային ֆինանսական կառույցների ներկայացուցիչների հետ:

Մասնավորապես, այցի առաջին օրը՝ մայիսի 16-ին, կայացել է հանդիպում ՎԶԵԲ նախագահ Օդիլ Ռենո-Բասոյի հետ, որի ընթացքում անդրադարձ է կատարվել երկկողմ համագործակցության օրակարգային հարցերին, մասնավորապես հաջորդ տարի Երևանում կայանալիք ՎԶԵԲ Կառավարիչների խորհրդի 33-րդ տարեկան հանդիպման կազմակերպմանը, Հյուսիս-հարավ նախագծի ֆինանսավորման հարցերին, ինչպես նաև ընթացիկ ենթակառուցվածքային ծրագրերին և նոր ծրագրային նախաձեռնությունների հնարավորություններին: Հանդիպմանը կարևորվեց նաև մասնավոր հատվածում համագործակցության խորացումը, ՀՀ մասնավոր հատվածում ՎԶԵԲ ֆինանսավորման ընդլայնումը:

Նույն օրը ֆինանսների նախարարի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է ՎԶԵԲ գլխավոր քարտուղար Կազուհիկո Կուգուչիի հետ կայացած հանդիպման ընթացքում քննարկվել

են Երևանում ՎԶԵԲ տարեկան հանդիպման անցկացման կազմակերպչական մանրամասներն ու իրականացվելիք աշխատանքների պլանավորման հետ կապված հարցեր:

Առանձին հանդիպումներ են կայացել ՎԶԵԲ Եվրասիայի ենթակառուցվածքային ծրագրերի պատասխանատու Եկատերինա Միրոշնիկի և Եվրասիայի էներգետիկ ոլորտի ծրագրերի պատասխանատու Աիդա Սիտդիկովայի հետ: Ե. Միրոշնիկի հետ քննարկվել են տրանսպորտի, աղբահանության, քաղաքային լուսավորության ոլորտում Հայաստանի և ՎԶԵԲ միջև ընթացիկ ծրագրերը և հնարավոր նոր նախաձեռնությունները: Ա. Սիտդիկովայի հետ հանդիպմանն անդրադարձ է կատարվել էներգետիկ ոլորտում համագործակցությանը, ընթացիկ որոշ ծրագրային հարցերի:

Այցի երկրորդ օրը՝ մայիսի 17-ին, գործարար համաժողովի շրջանակներում կազմակերպվել է «Հայաստանի վերելքը դեպի տեխնոլոգիական առաջընթաց. խելացի, կանաչ և կայուն ապագային ուղղված ներդրումներ» խորագրով՝ Հայաստանի ներդրումային հեռանկարներին նվիրված նիստը՝ ուղղված երկրի ներդրումային միջավայրի խթանմանը և ներդրումային գրավչության ներկայացմանը:

Առանձին հանդիպում է կազմակերպվել նաև Եվրոպական ներդրումային բանկի (այսուհետ՝ ԵՆԲ) ԵՄ հարևանության երկրներում վարկավորման գործառնությունների ղեկավար Լիոնել Ռափեյլի հետ, քննարկվել են Հայաստանում ԵՆԲ ընթացիկ պորտֆելին առնչվող հարցեր, ինչպես նաև նոր ուղղություններով ԵՆԲ-ի հետ համագործակցության ընդլայնման հնարավորությունները:

Մայիսի 17-ին կայացել է նաև Կառավարիչների խորհրդի տարեկան հանդիպման պաշտոնական բացման արարողությունը՝ անդամ երկրների պատվիրակությունների և գործարար համայնքի ներկայացուցիչների, այդ թվում և հայկական պատվիրակության մասնակցությամբ:

Պատվիրակության այցի վերջին օրը՝ մայիսի 18-ին, կազմակերպվել է ՎԶԵԲ Կառավարիչների խորհրդի լիագումար նիստը, որի շրջանակներում հաստատվել են ՎԶԵԲ 2022 թվականի ֆինանսական հաշվետվությունն ու կատարողականը, Կառավարիչներին է ներկայացվել 2023-2025 թվականների ռազմավարության իրականացման պլանը, կառավարիչների քվեարկությանն են ներկայացվել մի շարք հարցեր, ընդունվել են բանաձևեր:

Նույն օրն առանձին հանդիպում է կայացել Սլովենիայի Հանրապետության Ֆինանսների նախարար Կլեմեն Բոստանչիչի հետ, քննարկվել են երկկողմ համագործակցության

հեռանկարներին առնչվող հարցեր, մասնավորապես պետական ֆինանսների ոլորտում փորձի փոխանակման և կարողությունների զարգացման համատեքստում:

Հաշվի առնելով, որ ՎԶԵԲ 2024թ. տարեկան հանդիպումն անց է կացվելու Երևանում, մի շարք առանձին հանդիպումներ են կայացել ՎԶԵԲ համապատասխան արարողակարգային-կազմակերպչական թիմի ներկայացուցիչների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այցի շրջանակներում ՎԶԵԲ ներկայացուցիչների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ ակտիվացնելու Երևանում ՎԶԵԲ 33-րդ տարեկան հանդիպման կազմակերպչական աշխատանքները և այդ ուղղությամբ կազմակերպելու ՎԶԵԲ առանձին թեմատիկ ուղղվածության առաքելություններ Հայաստան:

Ստորագրությունը, ամսաթիվը՝

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

23 մայիսի, 2023թ.